




ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՂԱ ՄԱՏԵՆՋՅԱՆ

(Վանանայր Ս. Պեղարդի) •

ԱՅՐԻ ՎԱՆՔ ԿԱՄ ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔ



եր Հայրենի հողը պատմական ու սուրբ հուշարձանների, նվիրական խաչքարերի և սրբությունների մի պաշտելի աշխարհ է, որի յուրաքանչյուր կտոր ժայռի, քարի վրա հավերժացել է մեր ժողովրդի հանճարն ու սրտատուչ բարեպաշտությունը:

Ահա մին էլ այն բազմաթիվ սրբավայրերից — Գեղարդա վանքը, Կոտայքի շրջանում: Տաղանդավոր հայ բարտաշի մուրճի հարվածները մեղրամոմի փափկություն են տվել հայ աշխարհի կարծր զրանիտին և հայ հավատավոր վարպետների քարի ձևերերով քար առ քար, կամար առ կամար հայ հողի վրա բարձրացել են մեր պատմական հուշարձանները:

Այսպես են կերտվել մեր Հայրենիքի բոլոր հուշարձանները, այդպես է դեպի երկինք սլացել նաև Ս. Գեղարդի կաթողիկեն ժայռերի ծոցից...

Գեղարդ... այս անունը սրտատուչ մի հմայք ունի հայ ժողովրդի կրօնական զգացմունքների համար: Այդ անունը թրթռացել է մեր նախնիքների սրտում և սերնդից սերունդ հոսել ու հասել է մինչև մեր օրերը: Ամբողջ Արևելյան Հայաստանի ժողովուրդը, լինի նա շինական թե ուսումնական, ազգային առանձին հպարտությամբ, բարեպաշտությամբ է արտասանում Գեղարդ անունը: Գեղեցիկ է արդարև Գեղարդը իր բնակարանով.

նշանավոր՝ հայ կյանքում կատարած իր մշակութային դերով, մանավանդ իր կառուցվածքի առանձնահատկություններով:

Ահեղատեսիլ ժայռերի, բնաբանդակ բուրգերի և անդնդախոր ձորերի զրկում կառուցվել է գեղակերտ մի տաճար, սլացիկ դմբեթով և սրբատաշ մեծազանգված քարերով, որոնք հիացումի դողով են պարուրում դիտողի հոգին:

Գեղարդը, նախկին անունով Այրի վանքը, անցյալում եղել է հավանաբար հեթանոսական սրբավայր, ջրի պաշտամունքի մեհյանով: Ըստ ավանդության, Ս. Գրիգոր Լուսավորիչը այդ մեհյանի տեղում կառուցել է բրիստոնեական մատուռ և մի որոշ ժամանակ էլ այնտեղ հղնել է մեծ Սուրբը: Հսկա քարաժայռի մեջ փորված երեք շքեղ վիմափոր տաճարների խորաններից մեկը կրում է Ս. Գրիգոր Լուսավորչի անունը: Հեռավոր այս խորհրդավոր անկյունը սիրելի է եղել նաև Ս. Սահակ Պարթևի, որը այս մենության մեջ եկել է հաճախ ունկնդրելու Աստուծո ձայնը...

Գեղարդ-Այրի վանքը եղել է ի հնուց պատմական ուխտավայր: Հովհաննես և Օվայկեցի կաթողիկոսը 835 թվականին հրաժարվելով Հայրապետական Աթոռից, բնակություն է հաստատել Այրի վանքում: Ավելի ուշ, Հովհաննես Դրասխակերտցի կաթողիկոսը, հալածվելով արաբներից, 923 թվականին առ-


ժամանակ ապաստանել է Այրի վանքում, որտեղից նա խուսափելով թշնամու հետապնդումից, սարերի վրայով գնում պատսպարվում է Սևանի վանքում:

Արարացիների նըսըր ոստիկանը 923 թվականին հարձակվում է Այրի վանքի վրա, կոշոպտում է վանքի հարստությունները, միաբանության մեծ մասը կոտորում, կենդանի մնացածներին գերի վարում, վանքը հրկիզում:

Գրերի գյուտից հետո մեր վանքերը դադարում են ճգնարաններ լինելուց և դառնում են հայ մշակույթի վառարաններ, ռուսոմնական հաստատություններ, որտեղ ճգնել, տրեխել և երկնել են մեր դասական մատենագիրները: Այդպիսի մի ուսումնական վառարան է եղել նաև Այրիվանքը, ուր մշակվել ու զարգացել են մեր մատենագրությունը, արվեստն ու գիտությունը:

Այրի վանքը 12-րդ դարի վերջերին կազմում էր Զարարյանների սեփականությունը: Նրանց օրով ընդարձակվում ու մեծանում է Այրի վանքը: Այդ ժամանակ են կառուցվել գլխավոր եկեղեցին (1215 թ.), նևտաձիգ խոյանքով, երկնասլաց իր դմբեթով թաղազարդված տաճարը, իսկ նրա կից հոյակապ ժամատունը (1222—1223 թ.) ագուցված 12 հատ 4 մետր հասակով հաստաբետ սյուներով, առաստաղի զարդաքանդակներով ու ճարտարապետական մտքի հաղվազյուտ արգասիք հանդիսացող առկախ քարակիրտ զեղեցիկ ջահով:

Զարարյանների ազգական Պոռշ իշխանը 1283 թվականին Այրի վանքն իր շրջակայքով դնում է Զարարյաններից և դարձնում իրենց տոհմի գերեզմանատուն: Պոռշյանների տիրապետության շրջանում Այրի վանքը ավելի է ընդարձակվում ու բարգավաճում, հասնելով ժողովման ու զարգացման գագաթնակետին: Պոռշ իշխանը 1283 թվականին մեծ ժամատան կոդրին, մեծազանգված ժայռի մեջ փորել է տալիս երկու վիմափոր տաճարներ: Նորաճաշակ զարդաքանդակներով զարդարելով միակառուր շենքի ներքնամասը: Նրա որդին, Պապակ իշխանը, բարեպաշտ նույն զգացումից մղված, 1288 թվականին փորել է տալիս նույն հսկա քարաժայռի վերնամասում, ուղիղ իր հոր տաճարների վրա, երրորդ ընդարձակ ժամատուն-դամբանատունը և մի շարք վերանորոգումներ կատարում: Այդ ժամանակից ի վեր Այրիվանքը վերակոչվում է Գեղարդա վանք այն պատճառով, որ ժամանակի խառնակ քաղաքական դրությունը ստիպում է վանքում պահել Հիսուսի կողը խրված Ս. Գեղարդը, որը հայություն առաջին լուսավորիչ Թադևոս առաքյալը իր հետ Հայաստան էր բերել:



Գեղարդի վանքի գլխավոր տաճարի մուտք

Գեղարդա վանքը Զարարյանների և Պոռշյանների օրով եղել է կրոնական մտքի նշանավոր կենտրոններից մին Հայաստանում: Այստեղ գրվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Առավել զարգացման հասել է մանրանկարչությունը: Առանձնապես աչքի է ընկնում նաև երաժշտական արվեստը: Այստեղ Գոգիկ երաժիշտը հեղինակել է իր բազմաթիվ եկեղեցական մեղեդիները:

Գեղարդա վանքը բազմիցս ենթարկվել է բնական և քաղաքական ավերածությունների: Առանձնապես մեծ շտիկերով տուժել է պարսից Շահ-Աբբասի 1605 թվականի արշավանքների ժամանակ:

Վանքը մասնակի կերպով բանդվել է 1127, 1679 և 1840 թվականների երկրաշարժների ժամանակ և բազմիցս վերանորոգվել:

Շինարարական արվեստում հայ վարպետների տաղանդը մի անգամ ևս իր արդարացումն է գտել Գեղարդա վանքի տաճարի յուրահատուկ ճարտարապետությամբ: Այլնեցուցիչ հանդգնությամբ հայ վարպետը, առանց սյուների, խաչաձև հատակագծի վրայից բարձրացող որմերի անկյունների ծայրերին

կանգնեցրել է զեղուղեշ սլացքով և ավելի քան 15 մետր հասակով բարձրադիր դմբի՝, ամբողջովին սրբատաշ և համաշափ քարերով:

Կամարների և պատերի թխադույն գրանիտ քարերի ագլոցվածքը ցույց է տալիս արտակարգ ուշադրություն և համառ նպատակ ստեղծագործելու մի հավերժական հուշարձան: Անսանուն վարպետը հասել է իր նպատակին:

Փյսավոր տաճարին կից բնդարձակ ժամատունը միևնույն վարպետի նուրբ ճաշակի և հանդուգն մտքի արգասիքն է: Մի քառակուսի լայնածավալ սրահ, որի զեղազարդ դմբեր կոթնել է 4 զանգվածեղ բայց վայելչաճասակ սյուների վրա, առաստաղը բաղձաթիվ ծաղկանկարներով և առկախ քարե ջահով զարդարուն, մանավանդ ամբողջ 4 պատերը շուրջանակի օղակող 4 մետր բարձրությամբ հսկայական միակետյա գրանիտյա սյուները այդ կառուցվածքին տալիս են անխորտակելի ամբողջություն, վեհություն, ուժ:

Ժամատան հյուսիսային պատի երեսին բացվող երկու քարակոփ ղոները տանում են զեպի երկու վիմափոր տաճարները: Հսկա բարաժայտի արգանդը մտնելու հանդգնող վարպետը այստեղ թափել է իր զարդանկարչական գիտության բոլոր զանձերը, կոպիտ քարը վերածելով վայելչազեղ մատուռների, որոնց փ տես միայն ապշել կարելի է և մտածել մեր նախահայրերի հավատի խորությամբ ու անսահման զոհաբերության վրա:

Բազմաթիվ են վիմափոր ձգնարանները, անհամար են նրբաճաշակ խաչքարերը և քարերի ու պատերի վրա փորանկարված զարդարուն խաչերը: Իսկ տաճարի ու վիմափորների քարե սեմերի մաշվածքը ցույց է տալիս զեպի այս հազվագյուտ սրբավայրը դիմող ուխտավորների բարեպաշտությունը:

Պատմական տվյալները վկայում են, թե 1181 թվականից սկսած Գեղարդը ունեցել է մշտական վանահայրություն: Ներքին և արտաքին պատերի բազմաթիվ արձանագրություններից ծանոթանում ենք նախկին վանահայրերի և բարերարների անուններին և գործունեությանը:

Այսօր ևս Գեղարդա վանքը զարձել է մասնավոր ուշադրության առարկա: Նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետ Իր գահակալության առաջին իսկ օրից գործարանքով է շրջապատել մեր Հայրենիքի բոլոր սրբավայրերը, որոնց թվում հատկապես Գեղարդը: Այս պատճառով, Նորին Ս. Օծուխյունը, զարկ

տալու համար վանքի պայծառացմանը, վանահայրության պաշտոնը հանձնեց տողերիս զրոյդ Արմաշի վանքի նախկին ուսանող Տ. Հարություն արևիկա Մատենյանին: Գեղարդի վանքում սկսվեցին վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ: Ազատ զետի վրա ձգվեց կամուրջ, որից օգտվում են վանքի աշխատողները և շրջակայքի գյուղացիները: 160 մետր հեռվից, ժայռերի ներքևից հասող քաղցրահամ ու սառնորակ ջուրը բերվեց վանք ու կառուցվեց աղբյուր: Լուծվեց վանքի էլեկտրական լուսավորության այնքան կարևոր խնդիրը: Ուխտավորը այսօր հրճվանքով նշմարում է վանքից 500 մետր հեռավորության վրա վանքի դարբասի վերևի լուսափողփող խաչը:

Այդ նույն ժամանակամիջոցում նորոգվեց վանքի հարավային պարսպապատ մեծածավալ փլվածքը և ուխտավորների սենյակների թիվը ավելացավ: 1955 թվականի Ազգային-էկեղեցական սրբազոմար ժողովի կոնգրեսի պատգամավոր պ. Սարգիս Փյուրեճյանը Գեղարդի վանքին նվիրել է 4.000 ֆունտ ստերլինի մի գումար, որի շնորհիվ բնդարձակվել է մեծապես վանքի մեղվարուծարանը և շուտով փեթակների թիվը պիտի հասցվի 200-ի: Մեղվանոցի պատին փակցված է զեղեցիկ տախտակ հետևյալ արձանագրությամբ. «Գեղարդա մեղվարուծարան, հիմնված լոնդոնաբնակ Սարգիս Փյուրեճյանի նվերով, ի հիշատակ իր ծնողաց նազարեթի և Նարգուհու: Հիշատակ բաբերաբաց օրհնյալ եղիցիս:

Գեղարդը միաժամանակ Մայր Աթոռի հիմնական և զվթավոր տնտեսությունն է: Նա վանքին մատակարարում է յուղ, պանիր, մեղր, բուրդ, միս:

Կարելի չէ զսպել հուզումի արտասուքը մեր աչքերի, երբ տեսնում ենք, որ երկյուղած ուխտավորը վառում է մոմը Աստվածածնա պատկերի առջև, ու հետո ծնկաչոր մոտենում է խորանին, հաճախ իր արցունքներով թրջում է խնկարույր քարերը և իր «այրի կնոջ լուսան» գցում Գեղարդի զանձարանի մեջ:

Գեղարդ էկող հավատացյալ ուխտավորների թիվը հազարներով պետք է հաշվել:

Գեղեցիկ է Գեղարդը իր դիրքով և տպավորիչ, խոստում իր խորհրդով: Նրա բնավայրը Աստվածուց օժտված է հազվագյուտ վեհություն, հորդառատ բուսականությամբ, խոխոջուն ջրերով, մեղմօրոր մշտանվազ զեփյուռով և մաքրամաքուր օդով: Արժեք այցի գնալ Ս. Գեղարդ:

